գսսաս գործընթացի կազմակերպման առաջադրված պայմաններին, որի վերաբերյալ կազմվել է արձանագրություն, որը հայցվոր կողմից չի վիճարկվել: Եվ միայն, «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» Հիմնադրամ ՀՄԴ-ն նախաձեռնարկել է գնման գործընթացին մասնակցելու իրավասություն չունեցող անձանց ցուցակում «ՍՊՈՐՏ ՍԻԹԻ» ՍՊ ընկերությանը ներառվելու վերաբերյալ, որն էլ վիճարհվում է հայցվորի կողմից:

Նման պայմաններում դատարանը արձանագրում է, որ հայցվորը ընդունել է, որ չի բողոքարկել առաջարկած ապրանքների տեխնիկական բնութագրերը անհամապատասխանության վերաբերյալ որոշումները, բաց է թողել վիճարկման ժամկետները, այդ իսկ պատճառով բողոքարկվել է 12.08.2022թ.-ին կայացված որոշումը՝ «ՍՊՈՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ, որն էլ հայցվոր կողմից ընդունվում է, որ ներկայացվել է ամբողջական փոփոխված տարբերակով՝ այսինքն անհամապատասխան:

Դատարանը ամբողջ վերոշարադրյալը իմի բերելով, ուսումնասիրելով գործի հանգամանքները և ներկայացված ապացույցները, յուրաքանչյուր ապացույց գնահատելով գործում եղած բոլոր ապացույցների բազմակողմանի, լրիվ և օբյեկտիվ հետազոտության վրա հիմնված ներքին համոզմամբ, գտավ, որ հայցը ենթակա է մերժման:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 101-րդ հոդվածի համաձայն՝ դատական ծախսերը կազմված են պետական տուրքից և գործի քննության հետ կապված այլ ծախսերից:

Նույն օրենսգրքի 102-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն՝ դրամական պահանջներով հայց ներկայացնելու համար պետական տուրքի չափը որոշվում է հայցագնի հիման վրա:

Նույն օրենսգրքի 109-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերի համաձայն՝ դատական ծախսերը գործին մասնակցող անձանց միջև բաշխվում են բավարարված հայցապահանջների չափին համամասնորեն:

Տվյալ դեպքում, հայցը մերժվում է, դատարանը գտնում է, որ պետական տուրքի հարցը պետք է համարել լուծված:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 189-րդ, 191-րդ, 192-րդ հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

<<ՍՊՈՐՏ ՍԻԹԻ>> ՍՊԸ-ի հայցն ընդդեմ <<Հայաստանի Ազգային պոլիտեխնիկական համալսարան>> Հիմնադրամ ՀՄԴ-ի, երրորդ անձ՝ ՀՀ ֆինանսների նախարարություն՝ «Հայաստանի ազգային պոլիտեխնիկական համալսարան» Հիմնադրամ ՀՄԴ-ի կողմից 12.08.2022թ.-ին կայացված «ՍՊՈՐՏ ՍԻԹԻ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 (երկու) տարի ժամկետով ընդգրկելու վերաբերյալ որոշումը վերացնելու պահանջի մասին, *մերժել:*

Պետական տուրքի հարցը համարել լուծված:

Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից և կարող է բողոքարկվել ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ **Ռ. ՆԵՐՍԻՍՅԱՆ**